

Մենքերիմ ՄԵԼՔՈՆՅԱՆ

«ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ» ՊՈԵՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ ՀԵՏԱԶԳԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՐՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Իր աշխարհիկ կյանքի նախավերջին տարում (1923թ.) Հ. Թումանյանին մտահոգել է այսպիսի հարց. «Ես գիտեմ, մի օր, իհարկե, ոչ շուտ, իմ կյանքը մեծ հետաքրքրություն ու աղմուկ է հանելու, շատ բան է պարզվելու, տեսնելու են բոլորովին ուրիշ բան... *Գրվածքներս դեռ լավ չեն կարդացել, տեսել...*»¹: Գուցե Թումանյանի կողմից գույները որոշ չափով խտացված են ներկայացված, բայց գրվածքների դեռևս լավ կարդացված չլինելու մտահոգությունը ոչ միայն 1923թ., այլև այսօր էլ «ուժի մեջ է»: Եվ դա ասում ենք ոչ թե որպես մեղադրանք թումանյանագիտության հասցեին, այլ իբրև հաստատումն Թումանյանի կողմից արձանագրված այն ճշմարտության, թե, «գեղարվեստական կատարյալ գործերի մեջ միշտ մի նոր բան կարելի է գտնել, նոր բացատրություններ կարելի է տալ»²:

Այժմ մեզ հետաքրքրողն այն հարցն է, թե ինչպես է կարդացվել «Թմկաբերդի առումը» պոեմը, որ նրա «կենսագրության» մեջ մինչև օրս էլ կան համարժեք ձևով չընկալված, երկրնտրանք առաջացնող կետեր:

Հայտնի է, որ այդ պոեմը գրվել է Աբասթումանում և 1902թ. պատրաստ է եղել զետեղվելու Թումանյանի այն ժողովածուում, որը լույս աշխարհ եկավ 1903թ.: Բայց առայժմ դեռևս չհստակեցված պատճառով բանաստեղծը նպատակահարմար չի գտել պոեմը զետեղել այդ ժողովածուում: Այդ կապակցությամբ միանգամայն ուշագրավ է այն տեղեկությունը, որ տալիս է իշխանուհի Մ. Թումանյանը, որ Փ. Վարդապարյանի, Շանթի հետ ակտիվ մասնակցություն ուներ Թումանյանի 1903թ. ժողովածուի հրատարակման գործում: Նա գրում է. «Թմկաբերդի առումը» ես շատ սիրեցի և ուզում էի անպատճառ մտցնել ժողովածուի մեջ, բայց հեղինակը կտրուկ մերժեց՝ առանց բացատրության»³:

Մեր համոզմամբ՝ մերժելու պատճառի բացահայտումը միանգամայն կարևոր նշանակություն ունի պոեմի խորքային, հիմնավորապես գնահատման գործում, բայց իրողությունն այն է, որ առայժմ այդ հարցը պատշաճ ուշադրության չի արժանացել, պոեմի որոշ ուսումնասիրողներ նույնիսկ հարկ չեն համարել անդրադառնալ այդ հարցին: Էդ. Ջրբաշյանը բավական ընդհանուր ձևով է ուշադրության արժանացրել այդ հարցը, նրա կարծիքով, Թումանյանը 1902թ. վերջին պոեմը դեռ պատրաստ չէր համարել տպագրության, «դեռ ինչ-ինչ փոփոխություններ պետք է մտցնեք», «Մուրճ» ամսագրում պոեմն առաջին անգամ տպագրելուց առաջ բանաստեղծը «բարելավել է իր ստեղծագործությունը, թե ի՛նչ չափով և ի՛նչ բնույթ է ունեցել այդ աշխատանքը, այժմ դժվար է ասել՝ բոլոր ձեռագրերի բացակայու-

¹ Թումանյան Ն., Հուշեր և գրույցներ, Եր. 1969, էջ 307: Ընդգծումը հեղինակինն է:

² Նույն տեղում, էջ 139:

³ Տե՛ս «Թումանյանը ժամանակակիցների հուշերում» ժողովածու, Եր., 1969, էջ 476:

թյան պատճառով»⁴: Դժվար չէ նկատել, որ սա ոչ թե որոշակի պատասխան է, այլ ընդամենը ենթադրություն: Ընդ որում հարգարժան հեղինակը կարծես չի նկատել, որ իր այս դատողություններն ուղղակիորեն հակասության մեջ են գտնվում իր իսկ կողմից նշված այն ճշմարիտ իրողության հետ, որ այժմ ուշադրության առարկա հանդիսացող պոեմը «միակն է Թումանյանի նշանավոր պոեմներից, որն ստեղծագործական պատմություն գրեթե չունի, որը չի անցել վերամշակումների, էական փոփոխությունների այն ուղիները, որոնք բնորոշ են նրա մյուս պոեմների համար»⁵: Ավելացնենք նաև, որ ոչ մի հիմք չկա ասելու, թե Թումանյանի պոեմի 1902 թվականի բնագիրը փոփոխության է ենթարկվել, բայց «բոլոր ձեռագրերի բացակայության պատճառով» չենք կարող ասել, թե այդ փոփոխություններն ինչ բնույթի են: Ի՛նչ բացակայության մասին է խոսքը. եթե իսկապես բացակա են, ինչպե՞ս կարելի է ենթադրել, թե դրանցում եղել են «Թմկաբերդի առումը» պոեմի 1902թ. տարբերակին վերաբերող փոփոխություններ:

Աբասթումանյան աշնանը՝ Թումանյանի ստեղծագործական բուն վերելքի շրջանում, երբ սովորական գեղարվեստական ստեղծագործությունը վերածեց գլուխգործոցի («Անուշ» պոեմը), գրեց անմահ «Փարվանան», ինչպե՞ս կարող էր «Թմկաբերդի առումը» այնպիսի պակասություններով ստեղծած լիներ, որ նախքան լույս աշխարհ բերելը էական մշակման ենթարկելու անհրաժեշտություն զգար:

Համապատասխան հանգամանքները, որոնց մասին ստորև կխոսվի, մեզ այն համոզմանն են հանգեցրել, որ «Թմկաբերդի առումը» պոեմը 1903թ. ժողովածուի մեջ չգետեղելու բուն պատճառը ոչ այնքան դրա հետագա բարելավումն է եղել, այլ այն մտքի հետ հաշտվելը, որ այդ պոեմը պիտի՝ տպագրվի:

Ուրեմն՝ ի՞նչ հանգամանք կարող էր երկրնտրանքի պատճառ հանդիսացած լինել «Թմկաբերդի առումը» պոեմի հրատարակումը հետաձգելու հարցում: Հայտնի է, որ այդ պոեմի հիմնական աղբյուրը նույն վերնագրով ժողովրդական ավանդություն, լեգենդ է եղել: Թումանյանն իր պոեմի սյուժեն լեգենդային միջավայրից պատմական ժամանակաշրջան տեղափոխեց՝ պարսից Նադիր շահի ժամանակները: Նա այդ քայլն արեց այնպիսի պարագայում, երբ իշխողն այնպիսի մտայնություն էր, թե պատմական թեման հայրենասիրական բովանդակության սյուժեով պիտի արծածվի գեղարվեստական գրականության մեջ, և մինչև «Թմկաբերդի առումը» պոեմը հայ գրողներին չեն զբաղեցրել այնպիսի սյուժեներ, որ առնչվում են «ոչ թե հայրենասիրությանը, այլ մարդկային կրքերի աշխարհին»⁶:

Պոեմում սյուժեն այնպես է զարգանում, որ Թմուկ բերդի անկման պատճառ է ներկայացվում ոչ այնքան, ավելի ճիշտ՝ ոչ թե թշնամին՝ Նադիր շահը, նրա հզորությունը, այլ հենց այդ բերդի տիրոջ և տիրուհու վարքագիծը: Հայրենիքը դեպի դժբախտություն և կործանում տանող ապիկար թշվառականների, խաչագող

⁴ *Ջրբաշյան Էդ., Թումանյանի պոեմները, 1964, էջ 357:*

⁵ *Նույն տեղում, էջ 356:*

⁶ *Հախվերդյան Լ., Թումանյանի աշխարհը, 1966, էջ 338:*

սրիկաների ու ավագակների հանդեպ Թումանյանի հոգում կուտակված բուռն զայրույթը ժայթքեց 1921թ. Ավ. Բասահայանին ուղարկված նամակում⁷, բայց այդ զայրույթն ու ցասումը վաղուց է սկիզբ առած եղել բանաստեղծի հոգում, որ առաջին անգամ գեղարվեստորեն մարմնավորվեց հենց «Թմկաբերդի առումը» պոեմում: Եվ դա այնպիսի հանդուգն նորարարական քայլ էր, որ, իհարկե, չէր կարող որոշակի մտահոգություն չառաջացնել պոեմի հրատարակության կապակցությամբ: Հայրենի երկրին սպառնացող վտանգի հանդեպ իրատեսական մտեցում չցուցաբերելու «մոտիվը» Թումանյանին մտահոգել է նաև «Ջի աստուած ընդ մեզ է» լեգենդում:

Ահա եկել պաշարել են
 Լեզգիները մեր Սևան...
 Իսկ մենք խաղաղ, ահա էսպես
 Երգում ենք մեր մեղեդին⁸...

Շատ հավանական է, որ այս ստեղծագործության հրապարակման հարցում էլ Թումանյանը երկընտրանք է ունեցել, թողել է ձեռագիր վիճակում, մանավանդ որ դրա գրության շրջանում (90-ական թվականներ) Թումանյանն արդեն որոշակի քայլեր էր կատարում նույնպիսի թեմայով «Թմկաբերդի առումը» պոեմը կերտելու հարցում:

Վերը նշված ավանդախախտությունը բանաստեղծի կողմից բավական զգուշավորությամբ, ավելի ճիշտ՝ այնպիսի եղանակով և գեղարվեստական վարպետությամբ է կատարված, որ մասամբ մինչև օրս էլ համարժեք ձևով ընկալված չէ: Մի կողմ թողնենք այն, որ պոեմում պատումը կատարվում է ոչ թե անմիջապես բանաստեղծի, այլ թափառական աշուղի անունից, և պոեմի առաջին երկու հրատարակությունները (1905, 1908թթ.) ունեցել են «Աշուղի գրույցը» ենթավերնագիրը: Ավելի ուշագրավն այն է, որ Թաթուլի և Թմկա տիրուհու կերպարներն այնպես են կերտված, որ այնքան էլ հեշտ չէ նրանց բուն էության անմիջապես ընկալումը: Ուրեմն՝ անհրաժեշտ է անցնել այն հարցին, թե բանաստեղծն ինչպիսի նպատակադրումով ու կողմնորոշումով է կերտել այդ կերպարները, առայժմ դրանք ինչպես են ճանաչվել, ներկայացվել:

Պատմական միջավայր տեղափոխելով պոեմի սյուժեն՝ Թումանյանին հետաքրքրողը ոչ թե ազգային, սոցիալական բնույթի հարցեր են եղել, այլ մարդու թեման, ավելի մասնավորված ձևով ասած՝ այն հարցը, թե զգացմունքը և բանականությունը ինչ դերով և հարաբերությամբ են դրսևորվում պոեմում գործող անձանց աշխարհընկալման, նրանց վերաբերմունքի դրսևորման գործում:

«Թմկաբերդի առումը» պոեմի հրատարակումը հետաձգելու պատճառի բացահայտման հարցում հետամուտ չլինելու հետևանքով ամեննին էլ համարժեք ձևով չի ընկալվել պոեմի ոչ միայն գաղափարական բովանդակությունը, այլև կերպարների էությունը:

⁷ Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, 1999, հ. 10, էջ 408:

⁸ Թումանյան Հ., «Ուսումնասիրություններ և հրապարակումներ» ժողովածու, Եր. 1969, հ. 2, էջ 241:

Նախ Թաթուլի կերպարի մասին:

Թաթուլ իշխանը պատմական-իրական անձնավորություն չէ, որևէ գրավոր կամ բանահյուսական աղբյուրի մեջ նա չի հիշատակվում, նա Թումանյանի «գեղարվեստական երևակայության կերտվածքն է»⁹: Կերտելով այդ կերպարը՝ Թումանյանը կամեցել է գեղարվեստորեն այն միտքը մարմնավորել, որ իրատես չլինելը, զգացմունքով կողմնորոշվելն անխուսափելի են դարձնում դժբախտությունն ու աղետը իր և իր միջավայրի, հայրենի երկրի համար:

Վերհիշենք, թե «Թմկաբերդի առումը» պոեմին անդրադարձող գրականագետների կողմից ինչպես է ճանաչված Թաթուլ իշխանը: «Թմկաբերդի առումը» պոեմի նախերգանքի մասին համապատասխան դատողություններ անելուց հետո Էդ. Ջրբաշյանը գրում է. «Բարու և չարի հակադրությունը, մեկի փառքն ու մյուսի անեծքը այնուհետև ծավալվում և գեղարվեստորեն մարմնավորվում են բուն պոեմում՝ քաջ հայրենասեր Թաթուլի, նրա դավաճան կնոջ և նենգ ու դավաճան շահի պատմության մեջ: Մեկն անմահանում է իր գեղեցիկ, անձնագոհ գործով, մյուսներն՝ իրենց գործած չարիքով»¹⁰: Հասկանալի է, որ «անմահացած մեկ» ասելով հեղինակը նկատի ունի Թաթուլ իշխանին: Թաթուլի կերպարը որպես «դրականի հաստատում» է ճանաչվում նաև Հ. Թամրազյանի կողմից¹¹: Դժվար չէ նկատել, թե ինչքան միակողմանի է ճանաչվել Թաթուլը: Թաթուլը դրականի կրող է բացահայտորեն դրսևորվող թշնամանքի և դժբախտության դեմ մղած իր պայքարով, և այդ պայքարում նրան լիցքեր տվողը հիմնականում զգացմունքն է, իր անանուն տիրուհին, որի սերը ուժ և ավյուն է տալիս Թաթուլին, նրան դարձնում անհաղթ:

Նա է շունչ, հոգին իշխան Թաթուլի,

Նրբա սիրով է հարբած էն հրական,

Նրբա ժրպիտն է քաջին ուժ տալի,

Որ դաշտն է իջնում առյուծի նրման...

Զգացմունքի գերիշխանության տակ գտնվող այդ քաջը որպես անգոր է հանդես գալիս, ասես իրականությունից անջատված լինի այն դեպքում, երբ զգացմունքի հետ պիտի գործի նաև բանականությունը, ընդ որում, վերջինիս գերակայությամբ, որպեսզի կանխվեին տիրուհու այն նենգ քայլերը, որոնք ոչ միայն իր, այլև հայրենի երկրի համար աղետալի, ողբերգական հետևանք ունեցան: Թաթուլի կերպարը բոլոր դեպքերում որպես «դրականի հաստատում» ներկայացնելու մղումը Թամրազյանին անվարան է դարձրել իր դատողություններում: «Թաթուլ իշխանը,- գրում է Թամրազյանը,- հարբած է իր սիրով, երջանկությամբ, իր քաջության գործերով, չի էլ կարող զգալ, որ կինը մահու ոստայն է գործում: Դա շատ բնական է...»¹²:

⁹ Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, 1991, հ. 4-րդ, էջ 549:

¹⁰ Ջրբաշյան Էդ., նշվ. աշխ., էջ 365., ընդգծումը հեղինակինն է:

¹¹ Թամրազյան Հ., Հովհաննես Թումանյան. Բանաստեղծը և մտածողը, 1995, էջ 283:

¹² Նույն տեղում, էջ 286. ընդգծումը հեղինակինն է:

Ուղղակի զարմանալի է, որ ուժեղ ու դաժան թշնամու կողմից պաշարված բերդի տերը քար անտարբերություն է ցուցաբերում այսպիսի իրողությունների նկատմամբ, և դա «շատ բնական» է համարվում. ծպտյալ թշնամի աշուղն անարգել թափանցում է Թմուկ բերդ, որ դրա տիրուհու առաջ Նադիր շահի սերը երգի, աշուղի գալուց հետո տիրուհին ոչ միայն հոգեկան, այլև նույնիսկ ֆիզիկական փոփոխությունների է ենթարկվում, և այդ ամենը աննկատ է մնում Թաթուլի համար:

Լըսում է չքնաղ Թմկա տիրուհին
Գիշեր ու ցերեկ, նորից ու նորից...
Ու դարձավ նա լու՛ռ, դալու՛կ, մըտախո՛հ,
Ու քունը փախավ սիրուն աչքերից...

Այդ տիկինն այսպիսի ահավոր խարդավանքի է դիմում. խնջույք է սարքել, որ հարբեցնի ամուսնուն և նրա զինվորներին, որոնք վաղը պատերազմի դաշտ են իջնելու:

-Հապա լըցրե՛ք, իմ քաջ հյուրեր,
Բաժակներըդ լիուլի,
Խըմենք-աստված կըտրուկ անի
Թուրը իմ քաջ Թաթուլի:

Այս դեպքում էլ վտանգի հանդեպ անտարբեր է ու «քեֆ է անում Ջավախքի տերը»: Ընդամենը բուպեներ հետո Նադիր շահի գորքը պիտի ներխուժի Թմուկ բերդ, իսկ այդ բերդի տերը դավին բոլորովին անտեղյակ է, անտարբեր և անհոգ քեֆ է անում, և նրան բնութագրող գրականագետներն էլ ասում են, թե դա «շատ բնական է», Թաթուլն «անմահացել է իր գեղեցիկ գործով»:

Թաթուլի մասին դրական բան չի ասում նաև նրա տեսած երազը: Նկատված իրողություն է, որ Թումանյանն իր տարբեր ստեղծագործություններում («Անուշ», «Դեպի անհունը» և այլն) տեղ է տվել երազին: Սակայն Թաթուլի երազը էապես տարբերվում է մյուսներից նրանով, որ դրանում ոչ թե այնպիսի իրողություններ են երևան գալիս, որ պիտի կատարվեն երազը տեսնելուց հետո, այլ «լուծվում է» այնպիսի իրողության ճանաչման հարցը, որը նախքան երազ տեսնելը Թաթուլի աչքի առաջ է եղել, բայց չի նկատվել նրա կողմից, էլ ո՛ր մնաց թե համապատասխան վերաբերմունքի արժանացած լիներ: Ահա այդ երազը». Պատկած է իբրև Թաթուլ իշխանը նազելի կընոջ գըլուխն իր կըրծքին, Ու իբր ասում է՝ վե՛ր կաց, իմ հրեշտակ, Թո՛ղ որ սպանեմ ես էդ հըրեշին...»

Էապես է ասում Թաթուլ իշխանը,
Ու զարհուրանքով տեսնում է հանկարծ՝
Իրեն սիրելի կընոջ գըլխի տեղ
Օձի գըլուխն է կըրծքին ծանրացած...

Իրականում եղած ահավոր վտանգի միայն երազային ընկալումը, իհարկե, պիտի ողբերգական հետևանք ունենար...

Երբ մտորում ես, թե ինչու Թաթուլի կերպարն այդպես միակողմանի, միանգամայն վիճահարույց ձևով է ճանաչվել, հանգում ես այնպիսի համոզման, որ

այդ հարցում մասամբ «մեղավոր» է իրեն դրամատուրգ¹³ համարող Հ. Թումանյանը, որ «Թմկաբերդի առումը» պոեմում հենց դրամատուրգի պես էլ բավարարվել է գործող անձանց ներկայացնել իրենց արարքներով, իրենց աշխարհընկալումով՝ բնավ իր վերաբերմունքը չցուցաբերելով այդ ամենի նկատմամբ: Թումանյանը հույս է ունեցել, որ ընթերցողը, քննադատը պիտի կարողանան թափանցել նկարագրված իրողությունների խորքերը, բայց, ինչպես վերը նշվեց, կյանքի վերջին շրջանում ցավով է արձանագրել, թե «գրվածքներս դեռ լավ չեն կարդացել»:

Նույնքան անհիմն ու վիճահարույց է փառամոլության զգացումով ներծծված, դավաճան տիրուհու այն պահի հոգեվիճակի ընկալումն ու բնութագրումը, երբ նա հանդիպում է Թմուկ բերդ ներխուժած Նադիր շահի հետ:

Տիրուհին այդ պահին ակնկալում է անհամբեր, որ շահն իրեն գուրգուրելու է, արժանացնելու է խոստացած թագին: Բայց մի պահ մարդկայնացած շահն այնպիսի վերաբերմունք է ցուցաբերում, որ թագի արժանանալու տիրուհու ակնկալությունը հողս է ցնդում:

-Պատասխան տու՛ր ինձ, մատնիչ սևաչյա,

Մի՞ թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն...

Հանդուգն է ամեն ինչ արդեն կորցրած սևաչյա մատնիչի պատասխանը:

-Քաջ էր ու սիրուն քեզնից առավել,

Մի բարձր ու ազնիվ տղամարդ էր նա.

Կնոջ մատնությամբ ամրոց չէր առել,

Չէր եղել կյանքում երբեք խաբեբա...

Էդ. Ջրբաշյանը տիրուհու այս պատասխան խոսքում տեսնում է «սեփական արարքի տանջալից վերագնահատում, զղջման, ինքնաձաղկման, հոգեկան բարդ ապրումների մի բուռն հորձանք»¹⁴: Ա. Տերտերյանի համոզմամբ «Թմկա տիրուհին յուր Թաթուլին կորցնելուց հետո ավելի ուժգին է սկսում նրան սիրել...»¹⁵: Հ. Թամրազյանն այն համոզմանն է հանգել, թե տիրուհուն «ցնցում է իր իսկ մատնությամբ եկած սհավոր աղետը, նրա մեջ բարձրանում է խիղճը»¹⁶: Ավելորդ ենք համարում համաբնույթ այլ անհիմն կարծիքների վկայակոչումը, մանավանդ որ այլ առիթով անդրադարձել ենք այս հարցին¹⁷: Բավարարվենք միայն այն հանգամանքի ընդգծումով, որ հոգեբանական համապատասխան «պահանջների» պատշաճորեն հաշվառման դեպքում իր «քաջ ու սիրուն» ամուսնուն, իր հայրենի երկիրը

¹³ Իր դուստր Նվարդի հետ ունեցած առաջին գրական զրույցներից մեկում Թումանյանն ասել է. «Դու դեռ չգիտես, որ ես դրամատուրգ եմ» (Թումանյան Ն., նշվ. աշխ., էջ 26): Իր դրամատուրգ լինելու հարցին Թումանյանը նաև այլ առիթով է անդրադարձել:

¹⁴ Ջրբաշյան Էդ., Թումանյանի պոեմները, Եր., 1964, էջ 390:

¹⁵ Տերտերյան Ա., Հ. Թումանյան, Հայրենի երկրի քնարերգուն, Վաղարշապատ, 1911, էջ 62:

¹⁶ Թամրազյան Հր., Հովհաննես Թումանյան, Բանաստեղծը և մտածողը, Եր., 1995, էջ 293:

¹⁷ Տե՛ս Մելքոնյան Մ., «Անուշ» և «Թմկաբերդի առումը» պոեմների մի երկու հոգեբանական դրվագի մեկնաբանման շուրջ, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 12, Եր., 2009, էջ 37:

թշնամու ոտքի տակ զցած փառամու կնոջը *վայրկյանների ընթացքում*¹⁸ հիմնովին վերափոխված տեսնելը ոչ թե առաջին հայացքից, ինչպես Էդ. Ջրբաշյանն է նշում¹⁹, այլ իրապես տարօրինակ է և անսպասելի:

Բայց այժմ մեզ հետաքրքրող հարցն ավելի հեշտ լուծում էլ ունի. ենթադրենք, թե Նադիր շահի և տիրուհու հանդիպման այդ պահին շահը ոչ թե իր այդ «Մի թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն» հարցն ուղղած լիներ տիրուհուն, այլ իր խոստացած թագը դներ նրա գլխին. ի՞նչ է, տիրուհին Թաթուլի գովքն անելով, իր արարքը դատապարտելով կիրառարվե՞ր թագից: Այդ պահին, երբ համոզվեց, որ շահը իրեն թագին արժանացնող չէ, տիրուհուն հուզողն այն է, որ բարոյական ապտակներ հասցնի շահին: Եվ քանի որ շահի հարցի ձևակերպումն այնպիսին է, որ անխուսափելի է դարձրել Թաթուլին անդրադառնալը, տիրուհին շահի ստոր ու խաբեբա լինելն ընդգծելու համար նրան հակադրում է Թաթուլին: Եթե նշված այդ հանգամանքները չլինեին, տիրուհին այդ պահին Թաթուլին մտաբերելու անհրաժեշտություն ամենևին էլ չէր զգա:

Հայրենի երկրին սպառնացող ահավոր վտանգի պայմաններում այդ երկրի տիրոջը, պաշտպանին, այլև նրա տիրուհուն աղետաբեր կեցվածքով ներկայացնելն այնպիսի քայլ չէր, որ երկրնստրանք չպատճառեր Թումանյանին՝ այն էլ այնպիսի իրավիճակում, երբ մինչ այդ նման նախադեպ չի եղել հայրենի գրականության մեջ:

«Թմկաբերդի առումը» պոեմի հրատարակումը հետաձգելու հիմնական պատճառն ընկալված չլինելու հետևանքով համարժեք ձևով չի ընկալվել պոեմի գաղափարական բովանդակությունը, կերպարների էությունն ու վարքագիծը: Ոչ միայն Թմկա տիրուհին, այլև Թաթուլ իշխանը արժանի չեն աշուղի երանիին. «Երնե՛կ նըրան, որ իր գործով կապրի անվերջ, անդադար...»: «Աշխարհում ամեն բան հեշտ է,- առում է Թումանյանը,- մի բան է դժվար՝ մարդ լինելը»²⁰: Թաթուլը, տիրուհին չկարողացան հաղթահարել այդ դժվարությունը և չկարողացան ոչ թե արտաքին անբարենպաստ հանգամանքների պատճառով, այլ հենց իրենց անիրատեսության հետևանքով. զգացմունքի և մարդուն հատկանշող բանականության դերը պիտի ճիշտ գիտակցվի:

¹⁸ Ուշագրավ է հետևյալ իրողությունը. Մ.Մկրյանն այնպիսի ենթադրություն է մեջտեղ բերել, թե իբր «Թմկա տիրուհին և շահը իրար հանդիպելուց առաջ միմյանց նկատմամբ լցված էին ամենաայրող ստեղծությամբ» (Մ.Մկրյան, Հ.Թումանյանի ստեղծագործությունը, 1981, էջ 132): Այսպիսի ենթադրության համար պոեմը ոչ մի հիմք չի տալիս: Այդ ենթադրությունը վկայություն չէ՞ այն բանի, որ որոշ գրականագետներ իրենք էլ զգում են, որ տիրուհուն վայրկյանների ընթացքում վերափոխված տեսնելը հոգեբանորեն հիմնավոր չէ:

¹⁹ Ջրբաշյան Էդ., նշվ. աշխ., էջ 390:

²⁰ Թումանյան Ն., Հուշեր և զրույցներ, Եր., 1969, էջ 306:

**ОБ ОТКЛАДЫВАНИИ ИЗДАНИЯ ПОЭМЫ “ВЗЯТИЕ
КРЕПОСТИ ТМУК” И СВЯЗАННЫЕ С ЭТИМ ВОПРОСЫ***Резюме**С. Мелконян*

В вопросе откладывания издания поэмы “Взятие крепости Тмук”, написанной в 1902 г., по мнению автора статьи, определенную роль сыграла следующая реальность: в этом произведении, в которой представлен конкретно исторический сюжет, вопреки традиции, существующей в армянской литературе того времени, были представлены образы, не проникнутые патриотизмом, а плененные своим чувством любви, властолюбием и изменой родине. Такое восприятие действительности дала автору возможность по-новому интерпретировать вопросы, касающиеся идеологического содержания и образов поэмы.

Տեղեկություններ հեղինակի մասին*Մելքոնյան Մենեքերիմ Արշակի – Բ.գ.թ., պրոֆեսոր,**Գյումրու Մ.Նալբանդյանի անվ. պետական մանկավարժական**ինստիտուտի հայոց լեզվի ամբիոն, E-mail: karagr@gmail.ru*